ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան 11 .12.2017թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 38Ա

ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 11 նիստի օրակարգը՝

1. *Գոռավան համայնքի 2017թվականի տարեկան բյուջեի փոփոխման մասին*
2. *Գոռավան համայնքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին*
3. *Գոռավանի համայնքապետարանի աշխատակազմի և <<Գոռ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2018 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին*
4. *Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին*
5. *Գոռավան համայնքի 2017 թվականի տարեվերջյան գույքագրման արդյունքները հաստատելու մասին*
6. *Գոռավան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից օտարելու նպատակով տարածքներ առանձնացնելու և մեկնարկային գին սահմանելու մասին*

Կողմ 7 դեմ 0 ձեռնպահ 0

Ազիզյան Վազգեն

Թադևոսյան Կարեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Նիկողոսյան Վահե

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱՁԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան 11.12.2017թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 39Ն

ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Եկամտային մաս

Այլ ոչ հարկային եկամուտների պլանը պակասեցնել 2120.0 հազ. դրամով դրամով:
Տարեկան ճշտված պլանը սահմանել 1680.0 հազ. դրամ:

2.Ծախսային մաս

2.1<<Կառավարման մարմնի պահպանում>> գործառնական դասակարգման ծրագրի տնտեսագիտական դասակարգման

ա) 4212 հոդվածի պլանը պակասեցնել 211.291 դրամով,
Տարեկան ճշտված պլանը սահմանել 1138.709 դրամ
բ)4214 հոդվածի պլանը պակասեցնել 25.462 դրամով, որից 4000-ը ինտերնետ կապ, 21.462-ը հեռախոսակապ
Տարեկան ճշտված պլանը սահմանել 444.538 դրամ
գ)4215 հոդվածի պլանը պակասեցնել 25.000 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 32.000 դրամ:
դ) 4232 հոդվածի պլանը պակասեցնել 46.800 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 43200 դրամ
ե) 4234 հոդվածի պլանը պակասեցնել 23360 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 276.640 դրամ
զ) 4241 հոդվածի պլանը պակասեցնել 4.682 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 55.318 դրամ
է) 4251 հոդվածի պլանը պակասեցնել 360.000 հազ. դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 240.000 դրամ
ը) 4235 հոդվածի պլանը պակասեցնել 200.000 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 0 դրամ

2.2 <<Մշակույթային տներ և ակումբներ>> գործառնական դասակարգման 4111 հոդվածի պլանը պակասեցնել 376.604 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 1.923.396 դրամ

2.3 <<Ջրային կառույցներ>> գործառնական դասակարգման ծրագրի տնտեսագիտական դասակարգման
ա) 4111 հոդվածի պլանը պակասեցնել 725.187 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 1474.813 դրամ
բ)4213 հոդվածի պլանը պակասեցնել 138.285 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 6.861.715 դրամ
գ)4264 հոդվածի պլանը ավելացնել 100.000 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 1.000.000 դրամ

2.4 << Փողոցների լուսավորություն>> գործառնական դասակարգման ծրագրի տնտեսագիտական դասակարգման
4212 հոդվածի պլանը ավելացնել 106.681 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 4.696.681 դրամ

2.5 <<Արտադպրոցական դաստիարակություն>> գործառնական դասակարգման ծրագրի 4639 հոդվածի պլանը պակասեցնել 100.000 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 0 դրամ:

2.6 <<Հանրակրթական ուսուցում >> (անապահով ընտանիքներ) գործառնական դասակարգման ծրագրի 4729 հոդվածի պլանը պակասեցնել 40.000 դրամով,
Տարեկան ճշտված պլանը սահմանել 40.000 դրամ:

2.7 <<Աջակցություն հասարակական կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման ծրագրի 4819 հոդվածի պլանը պակասեցնել 200.000 դրամով,
Տարեկան ճշտված պլանը սահմանել 1.300.000 դրամ:

2.8 <<Նախադպրոցական կրթություն>> 4639 հոդվածի պլանը ավելացնել 15.583 դրամով,
Տարեկան ճշտված պլանը սահմանել 14.495.583 դրամ:

2.9<<Աղբահանության կոմունալ ծառայության >> 4213 հոդվածի պլանը պակասեցնել 452.000 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 2.148.000 դրամ:

3. <<Հանգիստ, մշակույթ և կրոն>> 4239 հոդվածի պլանը ավելացնել 652.000 դրամով
Տարեկան ճշտված պլանը սահմանել 2.252.000 դրամ:

4. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 4891 իրադվածից պակասեցնել 65593 դրամ,

Տարեկան ճշտված պլանը սահմանել 530.907 դրամ:

Կողմ 7 դեմ 0 ձեռնպահ 0

Ազիզյան Վազգեն

Թադևոսյան Կարեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Նիկողոսյան Վահե

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ. ԳՈՌԱՎԱՆ 11. 12.2017թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 40Ն

ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18 և 19րդ կետերի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12,13 և 14-րդ հոդվածների պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Գոռավան համայնքի 2018թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզյան Վազգեն

Թադևոսյան Կարեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Նիկողոսյան Վահե

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԱՋԻԿՅԱՆ

Հավելված
Գորավան համայնքի ավագանու 11.12.2017թ.
թիվ 40Ն որոշման

ԳՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԱՀՄԱՆԵԼ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

<u>ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝</u>

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

<u>բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝</u>

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

<u>գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝</u>

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև

կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) **համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝**

<u>ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝</u>

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ,

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասուն հազար դրամ,

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ.

<u>բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝</u>

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ,

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասուն հազար դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութսուն հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տասը հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հիսուն հազար,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հիսուն հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր վաթսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր տասը հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսունհինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ)

մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

Սահմանված դրույքաչափերը 4-րդ, 7-րդ և 12-րդ մասով սահմանված դեպքերի համար հաշվարկվել 0.5 գործակցի կիրառմամբ:

Տեղական վճար

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 1000 դրամ փոխհատուցման վճար.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 1000դրամ փոխհատուցման վճար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 1000 դրամ փոխհատուցման վճար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց՝ 3000 փոխհատուցման վճար.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց՝ 5000 դրամ փոխհատուցման վճար.

6) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 500 դրամ փոխհատուցման վճար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան 08.12.2017թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 41 Ն

ԳՈՌԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ <<ԳՈՌ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Գոռավանի համայնքապետարանի աշխատակազմի և <<Գոռ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1,2, 3,4 հավելվածների:

Կողմ 7 *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

Ազիզյան Վազգեն

Թադևոսյան Կարեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Նիկողոսյան Վահե

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԱՋԻԿՅԱՆ

Հավելված 1
Գոռավան համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 11-ի թիվ 41Ն որոշման

ԳՈՌԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 12

Համայնքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափերը / ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար	1	300.000
1.ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի օգնական	1	150.000
2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	161.000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	160.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	115.000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	110.000
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	95.000

3. ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Օպերատոր	1	95.000
Հավաքարար	1	80.000
Վարորդ	1	85.000
Գործավար	1	85.000
Այգեպան	1	74.500

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ

Հավելված 2
Գորայան համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 11-ի թիվ 41Ն որոշման

"ԳՈՌԱԿԱՆԻ ԳՈՌ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ" ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատողների ընդհանուր թիվը 16

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/
Տնօրեն	1	130.000
Հաշվապահ	1	80.000
Դաստիարակի օգնական	3	80.000
Դաստիարակ	3	100.000
Խոհարար	1	78.000
Խոհարարի օգնական	1	75.000
Տնտեսվար	1	78.000
Բուժքույր	1	78.000
Դաշնակահար	1	75.000
գործավար	1	78.000
Լվացարար	1	80.000
Դերձակ	1	80.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԱՋԻԿՅԱՆ

Հավելված 3
Գորավան համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 11-ի թիվ 41 Ն որոշման

ԳՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 2

Հաստիքի անվանումը	Հաստիքային միվորը	Պաշտոնային դրույքաչափը / ՀՀ դրամ/
Զրամբարի կարգավորող	1	85.000
Հարկահավաք	1	80.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԲԱՋԻԿՅԱՆ

Հավելված 4
Գորավան համայնքի ավագանու

2017թ դեկտեմբերի 11-ի թիվ 41Ն որոշման

Մշակութային հիմնարկների աշխատակիցների
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 2

հհ	Հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափերը
1	Մշ.տան տնօրեն	1	90000
2.	գրադարանավար	1	85000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԱՋԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ. ԳՈՌԱՎԱՆ 11.12.2017Թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 42Ն

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաեվ այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ 7 *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

Ազիզյան Վազգեն

Թադևոսյան Կարեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Նիկողոսյան Վահե

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱՋԻԿՅԱՆ

Հավելված
Գոռավան համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 11-ի
N 42-Ն որոշման

ԿԱՐԳ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Գոռավան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Գոռավան համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:

5. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:

6. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են Գոռավանի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակիցները:

III. Աղբահանության վճարի հաշվարկումը

7. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով,

2) այլ շենքերի կամ շինությունների համար՝ ըստ արտադրվող աղբի ծավալի կամ զանգվածի՝ Գոռավան համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերի սահմաններում:

8. Սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝

1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 20 դրամ,

2) հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 10 դրամ,

3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 5 դրամ,

4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 2 դրամ,

5) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով: Աղբահանության վճար վճարողի պահանջով (դիմումով) կարող է կատարվել վերահաշվարկ՝ ըստ շինության փաստացի նպատակային օգտագործման (չափերի, քմ) տեղեկությունների տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Տվյալ դեպքում աղբահանության վճարը հաշվարկվում է ըստ փաստացի նպատակային նշանակության օգտագործման չափերի:

IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

9. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը իրականացնում են Գոռավանի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակիցները:

10. Գանձողը ստանում է Գոռավանի համայնքապետարանի կողմից տրամադրված՝ աղբահանության վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը, որի համար Գոռավան համայնքի ղեկավարի և գանձողի միջև կնքվում է անդորրագրերի հանձնման և ընդունման արձանագրություն:

11. Համակարգողն իրականացնում է գանձողի կողմից գանձված և հայտի դեպքում՝ անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:

12. Գանձողը ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների, ինչպես նաև դրանց պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:

13. Գանձողը պարտավոր է տվյալ օրվա գանձված գումարը մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ը բանկային կամ փոստային համակարգի միջոցով գումարը փոխանցել համապատասխան հաշվին, իսկ անդորրագրերը՝ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը, մուտքագրել տվյալների հաշվառման շտեմարան:

Գանձված անդորրագրերի երկրորդ օրինակը՝ համապատասխան ամփոփագրով, գանձողը պարտավոր է հանձնել աշխատակազմին՝ մինչև գանձված գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15.00-ն:

14. Աղբահանության վճարի հաշվառման և գանձման լիազորություններով օժտված աշխատակիցը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների վերաբերյալ:

V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

15. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

16. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում փվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

VI. Այլ դրույթներ

17. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Գոռավան համայնքի ղեկավարի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան 08.12.2017թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 43

ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 20.11.2017թվականի թիվ 22 կարգադրությամբ ստեղծված գույքագրման հանձնաժողովի եզրակացությունը և կազմած ակտը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Գոռավան համայնքի 2017 թվականի տարեվերջյան գույքագրման արդյունքները համաձայն 1 և 2 հավելվածների:

Կողմ 7 *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

Ազիզյան Վազգեն

Թադևոսյան Կարեն

Խաչատրյան Աննա

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Նիկողոսյան Վահե

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱՋԻԿՅԱՆ

Հավելված 1

Գոռավան համայնքի ավագանու 11.12.2017թ.-ի թիվ 43 որոշման

2017թ.-ի գույքի հաշվարկ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

ՀՀ	ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԱՐԵԹԻՎԸ	ՔԱՆԱԿԸ	ԳԻՆԸ
1	Երկու հարկանի շենք	1985	1	34572,9
2	Հագուստի կախիչ	1988	1	9,2
3	Սաքսաֆոն	1988	1	6,9
4	Գրասեղան 1 տումբանի	1988	1	1,9
5	Գրապահարան	1988	1	0,3
6	Գրասեղան	1988	2	
7	Երկաթյա պահարան	1988	1	0,3
8	Ակորդիոն	1988	1	7,7
9	Նկար յուղաներկ	1988	1	0,0
10	Պարի համազգեստ	2005	16	69,0
11	Երաժշտական կենտրոն	2013	1	300,0
12	Դաշնամուր	2013	1	77,0
13	Ծաղկաման	2013	10	8,0
14	Աթոռ	2013	10	1,5
15	Ամբիոն	2013	1	10,0
16	Աստիճան	1990	1	0,08
17	Գրասեղան 2 տումբանի	1990	1	1,90
18	Ընթերցասեղան	1990	1	1,10
	ԸՆԴԱՄԵՆԸ			35064,7
	ԳՐԱԴԱՐԱՆ			
1	Ցուցափեղկ	1990	2	0,5
2	Կատալոգի արկղ	1990	1	0,2
3	Գրասեղան	1990	1	0,1
4	Ընթերցասեղան	1990	1	1,1
5	Էտաժետկա	1990	1	0,1
6	Մետաղյա ստելաժ	1990	20	3,1
7	Կիսափափուկ աթոռ	1990	7	5
8	Գրապահարան	1990	2	0,6
9	Կառնիզ	1990	3	0,1
10	Գրականություն		4261	9,0
11	Նոր գրականություն		31	17,0
12	Վարագույր	2013	10մ	20,0
13	Սեղան մեկ տումբանի	1990	1	0,7
	ԸՆԴԱՄԵՆԸ			57,5
	ԲՈՒԺԿԵՏ			
1	Գրասեղան մեկ տումբանի	1985	2	0,5
2	Կոնքաչափ	1985	1	0,08
3	Էմալապատ տաշտ	1985	1	0,08
4	Լվացարան	1985	1	0,08
5	Սեղան	1985	1	0,08
6	Մանկական կշեռք	1985	1	0,08
7	Հասակաչափ	1985	1	0,08
8	Բիքս	1985	2	0,1

9	Ռեֆեկտոր	1985	1	0,08
10	Պատգարակ	1985	1	0,08
	Ընդամենը			1,24

Գյուղապետարանի վարչական շենք

ՀՀ	ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԱՐԵԹԻՎԸ	ՔԱՆԱԿԸ	ԳԻՆԸ
1	Գյուղապետարանի վարչական շենք	1975	1	1898,7
2	Սեղան երկու տումբանի լեզվ.	1980	2	3,6
3	Սեղան մեկ տումբանի	1990	2	0,7
4	Երկաթյա պահարան	1980	5	1,5
5	Հեռախոս	2002	4	7
6	Ջահ	2002	9	27
7	Ջահ	2002	1	27,5
8	Բազմոց, բազկաթոռ / կոմպլ./	2002	1	203,0
9	Հեռուստացույց	2004	1	126,0
10	Համակարգիչ Պ-4	2005	1	324,6
11	Տպիչ /Canon/	2005	1	93,6
12	Գազի վառարան	2005	1	56,0
13	Գրասենյակի սեղան	2005	1	35,0
14	Քարտուղարի սեղան	2005	1	15,0
15	Սելեկտոր	2010	1	65,0
16	Սելեկտորի հեռախոսներ	2005	5	10,5
17	Զինանշան	2005	1	15,0
18	Աշխատասենյակի ցուցանակներ	2006	10	53,1
19	Համակարգիչ Պ-4 3000	2006	1	285,0
20	ԼՍԴ սամսունգ մոնիտոր	2006	1	185,0
21	Պատճենահանող սարք /CANON// U	2006	1	210,0
22	Թերմոս	2008	1	70,0
23	Սառնարան /Orvika/	2008	1	180,0
24	Աթոռ /տնօրենի/	2008	1	50,0
25	Սեղան /տնօրենի/	2008	1	180,0
26	Սեղան խորհրդակցության	2008	1	114,0
27	Խոհանոցի կահույք	2009	1	80,0
28	Ալեհավաք	2010	1	102,0
29	Տպիչ/ HP/	2010	1	90,0
30	Համակարգիչ	2010	2 կոմպլեկտ	703,0
31	Ղեկավարի բազկաթոռ	2011	1	220,0
32	Աթոռ	2011	12	185,0
33	Հեռուստացույց	2011	1	49,0
34	Համակարգիչ	2013	1 կոմպլ.	270,0
35	Տնօրենի սեղան	2015	1	120,0
36	Անշարժ մեծ աթոռ	2015	2	80,0
37	Անշարժ աթոռ	2015	15	150,0
38	Շարժական աթոռ	2015	1	50,0
39	Շարժական աթոռ	2015	1	58,0
40	HISENSE ՕԴԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ	2015	1	309,0
41	SAMSUNG PA51H 4500 ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ	2014	1	324,0
42	Տեսախցիկներ	2016	կոմպլեկտ	380,0
43	Շերտավարագույր	2014	9	167,0

44	Մետաղական տնակ	2016	1	530,0
45	Ջրի նասոս	2017	1	45,0
46	Հովացուցիչ	2017	1	15,0
47	Ավտոմեքենա Վազ212140	2017	1	4500,0
48	Համակարգիչ G3900	2017	2	266,8
49	Մոնիտոր	2017	2	92,2
50	Տպիչ/Canon MF3010/	2017	1	97,4
51	Ժամացույց փայտե քանդակված	2017	1	100,0
	ԸՆԴԱՄԵՆԸ			13220,2

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ ԵՎ ԳՈՒՅՔ

1	Գառնի ջրագիծ և օրվա կարգ. Ջր.	2005		39058,5
2	Ջրագիծ խմելու/ Մ. Մաշտոց/	2005	400 մ	986,8
3	Ոռոգման ջրագիծ /կենտր./	2005	300 մ	3499,8
4	Համայնքի փողոց. լուսավոր.	2008-2017	450 լամպ	10050
5	Հուշարձան	2005	1	1500,0
6	Գյուղամիջյան փոքր առու/Ար. Նրբ.	2005	100 մ	350,0
7	Մշակ. Տան շրջակ. Ցանկապատ	2005	270 մ	650,0
8	Փողոցների ցուցանակներ	2006	475	400,0
9	Ջրաչափ Գառնիի ջրագծի /հիմ./	2006	1	50,0
10	Գերեզմանոցի ջրագիծ	2006	800 մ	835,0
11	Ջրոսայգու ցանկ., ցայտաղբյուր	2006	1	669,7
13	Գ/Պ գազաֆիկացում	2008		999,8
14	Գ/Պ ջեռուցում	2008		980,0
15	Ջրագիծ/ Դաշտաքար-Գոռ./	2012		65000,0
	ԸՆԴԱՄԵՆԸ			125029,6

<<Գոռավանի Գոռ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի

2017 թվականի հիմնական միջոցներ

	Անվանում	Քանակ	Ընդամենը	Տարեթիվ
1	Մանկապարտեզի շենք	1	14457053	2007
2	Խոհանոցի կահույք	1	123862	2007
3	Դաշնամուր	1	13107	2007
4	Խաղալիքների պահարան 9մ	9մ	57671	2007
5	Հանդերձապահարան	6մ	44564	2007
6	Պահեստի կահույք	6մ	31456	2007
7	Տնօրենի սենյակի կահույք	1	36700	2007
8	Մանկական սեղան	12	44564	2007
9	Մանկական պլասմասե սեղան	7	0	2007
10	Մանկական մահճակալ	10	0	2007
11	Մանկական մահճակալ	40	0	2007
12	Սենյակի պահարան	4մ	34078	2007
13	Խոյ	1	28836	2007

14	Լվացքի մեքենա	1	85031	2007
15	Հեռուստացույց	1	77112	2007
16	Սառնարան	1	105757	2007
17	Վարագույրի կախիչ	30մ	7864	2007
18	Աթոռներ մեծ	12	0	2007
19	Աթոռներ փոքր պլաստմասե	25	0	2007
20	Մանկական վերմակ	50	26214	2007
21	Մանկական դոշակ	50	52436	2007
22	Մանկական բարձ	50	19661	2007
23	Սպիտակեղենի կոմպլեկտ	60	32768	2017
24	Վարագույր	37մ	11642	2007
25	Դաշնամուր	1	0	2007
26	Հեռուստացույց	1	0	2007
27	Էլեկտրական թեյնիկ	1	2127	2008
28	Դիվիդի	1	13025	2008
29	Գորգ	6մ	10696	2008
30	Ջրի նասոս	1	14881	2009
31	Վերմակ դոշակ բարձ	20	47187	2009
32	Սպիտակեղենի կոմպլեկտ	20	13108	2009
33	Էլեկտրական վառարան	1	17007	2009
34	Ջրի պապլավոկ	1	2232	2009
35	Մանկական մահճակալ	5	259523	2009
36	Մանկական աթոռներ	10	6636	2010
37	Ջրամատակարարման համակա	1կոմպլ	87392	2010
38	Մանկական խաղահրապարակ	1	0	2010
39	Վինտիլյատոր	1	8300	2010
40	Էլեկտրական ջեռուցիչ	1	5315	2010
41	Պլաստմասե աթոռ	25	23040	2011
42	Հատակի գորգ	6մ	17818	2012
43	Մանկակ.մահճ.մեկ տեղանոց	20	504000	2013
44	Մանկական զգեստապահ.8տեղոս	3	79200	2013
45	Մանկական սեղան	7	109200	2013
46	Մանկական աթոռ փայտից	30	91200	2013
47	Խաղալիքների պահարան	3	63600	2013
48	Հարիչ	1	15300	2014
49	Համակարգիչ	1	195000	2015
50	Տպիչ	1	60000	2015
51	Տեսաձայնագրիչ	1	165000	2010
52	Մետաղյա պահարան ստելաժ	2	0	
53	Գրասենյակային սեղան	1	0	2015
54	Գրենական սեղան	2	40000	2015
55	Աթոռ տնօրենի	1	15000	2016
56	Արդուկ	1	10000	2016
57	Աթոռ	12	120000	2017
58	Աթոռ պտտվող	1	40000	2017
59	Փոշեկուլ	1	40000	2017
	ԸՆԴԱՄԵՆԸ		17211533	

Հավելված 2
Գոռավան համայնքի ավագանու 11.12.2017թ.-ի
թիվ 43 որոշման

ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔ

ՀՀ	ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՔԱՆԱԿԸ	ՏԵԽ. ՎԻՃԱԿԸ
	Գոռավանի համայնքապետարան		
1	Ռետինե խողովակ	10մ	արևից քայքայված
2	Անվադողեր	4	մաշված
	<<ԳՈՌ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ		
1	Հովացուցիչ	1	անսարք
2	Փոշեկուլ	1	անսարք
3	Արդուկ	1	անսարք
4	Էլեկտրական մսաղաց		անսարք
5	Դանակ	8	ոչ պիտանի
6	Աղաման	12	կոտրված
7	Փոքր գդալ	3	ոչ պիտանի
8	Փայտե գդալ մեծ	1	կոտրված
9	Խոհանոցի կախիչ	4	ոչ պիտանի
10	Հացի տախտակ	1	ոչ պիտանի
11	Հացաման	8	ոչ պիտանի
12	Բարձի երես	5	մաշված
13	Սանր	50	ոչ պիտանի
14	Սավոկ	1	ոչ պիտանի
15	Խորը ափսե	10	կոտրված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ. Գոռավան

11.12.2017թ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ. 44Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67,68 հոդվածների պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գոռավան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից օտարման նպատակով առանձնացնել հետևյալ հողատեսքերը՝
   Ծածկագիր 0293-0001 2.7 հա գյուղ. նշ. արոտ, ՎՆԱ գոտի
   Ծածկագիր 0106-0012 2,435 հա գյուղ. նշ. արոտ, ՎՆԱ գոտի
   Ծածկագիր 0163-0008 2,2 հա գյուղ նշ. արոտ, Մերձարաքսյան գոտի
   Ծածկագիր 0171-0022-ից 0.87 հա գյուղ նշ. արոտ, Մերձարաքսյան գոտի
   Ծածկագիր 0293-0002-ից 1.77 հա գյուղ նշ. այլ, ՎՆԱ գոտի
2. Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդ-վաճառքով օտարել նշված տարածքները:
3. Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով:

Կողմ 7 դեմ 0 ձեռնպահ 0

Ազիզյան Վազգեն
Թադևոսյան Կարեն
Խաչատրյան Աննա
Հայրապետյան Անդրանիկ
Մելիքսեթյան Վահրամ
Նիկողոսյան Վահե
Վարդանյան Սուրեն

Համայնքի ղեկավար՝ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ